Թող ինքը Հաքստհաուզէն հիմնաւորէ այդ միտքը։

«Մի քանի բնախոյզներ են, ասում է նա իր երկի յառաջաբանում, ինչպէս Ֆոխ, Վաղնէր եւ Դիւբուա, որ նորագոյն ժամանակ խնամոտ ուսումնասիրութիւններ են նուիրել այդ երկրին (Հայաստանին)։ բայց հէնց այդ բնապատմական ուսումնասիրութիւններն են, որ ամենից քիչ շտապողականութիւն են ներկայացնում։ Վասնզի բուսական եւ հանքային աշխարհը ամենէն սակաւ ենթակայ է ժամանակի փոփոխութիւններին։ Հազարամեակների ընթացքում իսկ՝ այդ աշխարհը մնում է նոյնը, միայն թեթեւ փոփոխութիւնների ենթակայ։ Այն ինչ՝ մարդու ձեռքով կանգնեցուած պատմական յուշարձանները արագութեամբ են աւերւում եւ վերջ ի վերջոյ անհետանում են իսպառ։ Նմանապէս՝ ժողովրդական սովորոյթները, ծէսերը, կենցաղավարութիւնը ենթակայ են փոփոխման։ Անգամ լեզուները ստիճանաբար փոփոխւում են եւ ժամանակի ընթացքում մեռնում բոլորովին։ Եւ սակայն, գիտական հետազօտութեան համար ազգագրութիւնը աւելի պակաս կարեւորութիւն ունեցող նիւթեր չէ մատակարարում, քան՝ բնապատմութիւնը։ Այս պատճառով էլ գիտութեան է՛ն վսեմ եւ շնորհակալութեան արժանի խնդիրներից մէկն է՝ մի ժողովուրդի էութիւնը եւ նրա ազգային կեանքը բոլոր կողմերով հասկանալը, ընդգրկելը եւ նկարագրելը։

«Հէնց այս խնդրին էլ,— շարունակում է Հաքստհաուզէն,— նուիրել եմ ես իմ յատուկ ուշադրութիւնը։ Իմ այցելած ցեղերի նկարագիրը եւ կեանքի պայմանները ես դիտել եւ ուսումնասիրել եմ ճշմարիտ հետաքրքրութեամբ ու անհատապէս նուիրուածի զգացումներով ու սիրով»։

Այս գնահատական խօսք ուղղելով իրենից առաջ Անդրկովկաս այցելած բնագէտ եւ լեզուաբան հետախոյզներին, Հաքստհաուզէն իրաւամբ կցում է.

«Բայց նրանք քիչ կարեւորութիւն են տուել՝ նկարագրելու ժողովրդական կենցաղը իր ընկերային եւ ընտանեկան պայմաններում, ժողովրդական ծէսերն ու սովորոյթները, հաւաքելու այդ երկիրների աւանդութիւնները, ժողովրդական երգերը եւ առասպելները։ Եւ սակայն հէնց այս մարդն է որ հարուստ նիւթ է մատակարարում մեզ, իսկ դրա խորագոյնին հետազօտութիւնը կարող է պայծառ լոյս սփռել մինչեւ իսկ Եւրոպայի որոշ երկիրների վրայ»։

Անուանի ճամբորդը այսպէս է վերջացնում իր նախաբանը.

«Մասնաւորապէս երկու խնդիրներ են, որ այս երկի մէջ քննութեան առարկայ են դարձել, եւ որ արժանի են աւելի մեծ ուշադրութեան ու լայն հետազօտութեան։ Առաջին՝ այն նմանութիւնը եւ, թւում է, ազգակցութիւնը, որ գոյութիւն ունի Օսերի*) եւ հին գերմանների սովորոյթների, ծէսերի ու կենցաղավարութիւնների միջեւ, եւ ապա այն նշանաւոր դիրքը, որ այժմ գրաւում է հայ ազգը։ Բոլոր նշանները ցոյց են տալիս, որ հէնց այս ժողովուրդն է աստուածային Նախախնամութեան կողմից որպէս գործիք ընտրուած՝ քրիստոնէութիւնը եւ քաղաքակրթութիւնը Արեւելքում տարածելու։ Անտարակոյս, առանց վսեմ, առանց համաշխարհային-պատմական նշանակութեան չէ, որ այս քրիստոնեայ ժողովուրդը ցրուած է Մարօքքոից մինչեւ Չինաստան ձգուող հսկայական տարածութեան վրայ։ Չնայած դրան՝ նա, հայ ժողովուրդը, իր բոլոր հատուածներով կապուած է ընկերային, քաղաքական եւ կրօնական կապերով ու ներկայացնում է մի ինքնամփոփ ազգային միութիւն»։

Եթէ մի կողմը թողնենք «աստուածային նախախնամութեամբ» մեր ժողովրդի ցրուածութեան փաստի մեկնաբանութիւնը, պէտք է ասենք, որ առաջին անգամ Հաքստհաուզէնն է յատկացրել հայութեանը՝ Արեւելքում քաղաքակրթութիւն տարածելու առաքելութեան դերը։ Մի միտք, որ բազմիցս եւ տարբեր առիթներով կրկնուած ու լուսաբանուած ենք գտնում Հաքստհաուզէնի աշխատութեան մէջ։

Ցաւանի է արդէն, որ հայութեան նոյն այդ պատմական առաքելութիւնը եւ նրան սպասաւորելու պարտականութիւնը յետագային իրենց

---

*) Օսերը կովկասեան լեռնաշղթայի վրայ նստած ցեղերի շարքին են պատկանում, արիական ծագումով։ Ուրիշ հետախոյզներ եւս յայտնել են այն կարծիքը, թէ Օսերը գերմաններին ցեղակից են։ Ա.